ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ N 153 -Ա

«04.» ՀՈՒԼԻՍ 2022Թ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 24-Ի ԹԻՎ 3 ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԹԻՎ 1 ՀԱՎԵԼՎԱԾԸ ՆՈՐ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի, 34-րդ հոդվածի պահանջներով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. ՀՀ Վայոց ձորի մարզպետի 2012 թվականի հունվարի 24-ի «Արտակարգ իրավիճակների հետևանքով ֆիզիկական և իրավաբանական անձանց պատճառված վնասները գնահատող մարզային հանձնաժողովի անհատական կազմը և աշխատակարգը հաստատելու մասին» թիվ 3 որոշմամբ հաստատված թիվ 1 հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:
2. Որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

7/4/2022

X

ԱՐԱՐԱՏ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Подписано: GRIGORYAN ARARAT 1310850550

Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ

p. Եղեգնաձոր

Հավելված՝ ՀՀ Վայոց ձորի մարզպետի
2022թ. հուլիսի 04-ի թիվ 153-Ա որոշման

ՀՀ Վայոց ձորի մարզպետի 2012 թվականի հունվարի 24-ի «Արտակարգ իրավիճակների հետևանքով ֆիզիկական և իրավաբանական անձանց պատճառված վնասները գնահատող մարզային հանձնաժողովի կազմը

1. ՀՀ Վայոց ձորի մարզպետի ոլորտը համակարգող տեղակալ (հանձնաժողովի նախագահ),
2. Հանձնաժողովի անդամներ
1) մարզպետարանի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության պետ,
2) մարզպետարանի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ,
3) մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետ,
4) մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ,
5) մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ,
6) մարզպետարանի քաղաքաշինության վարչության պետ,
7) մարզպետարանի քաղաքաշինության վարչության տրանսպորտի բաժնի պետ,
8) մարզպետարանի զարգացման ծրագրերի, զբոսաշրջության և վերլուծության բաժնի պետ,
9) ՀՀ ԱԻՆ փրկարար ծառայության Վայոց ձորի մարզային փրկարարական վարչության պետի տեղակալ,
10) ՀՀ սննդամթերքի անվտանգության տեսչության Վայոց ձորի մարզային կենտրոնի պետ,
11) ՀՀ բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի Վայոց ձորի տարածքային բաժնի պետ,
12) ՀՀ վիճակագրական կոմիտեի Վայոց ձորի մարզային վարչության պետ,
3. մարզպետարանի քարտուղարության պետ (հանձնաժողովի քարտուղար):